



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

< 07 > ապրիլ 2015 թ. N 2/458 -Ա

Գ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ն.ՄՈՒՍՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին„ ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի
1-ին կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների
ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 23.03.2015թ.
թիվ 13/2015 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. ՀՀ Ֆինանսների նախարարության Արտաշատի տարածքային հարկային
տեսչության Ընթացիկ հսկողության բաժնի պետ Գեղամ Ստեփանյանին և Էջմիածնի
տարածքային հարկային տեսչության Ընթացիկ հսկողության բաժնի գլխավոր հարկային
տեսուչ Նունե Մուսոյանին հայտարարել „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ„:

2. ՀՀ Ֆինանսների նախարարության Անձնակազմի կառավարման վարչության պետ
Ե.Սարգսյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ